ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ Yerevan.today և մի քանի այլ լրատվական կայքերի՝ գործարար Խաչատուր Սուքիասյանի դատական հայցի վերաբերյալ

(Ի լրումն նույն հայցի կապակցությամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքի)

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2021թ. հուլիսի 8-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Տեղեկատվական վեճերի խորհուրդը՝ ուսումնասիրելու վերջինիս 2021թ. հունիսի 30-ի կարծիքը, որը կայացվել է Yerevan.today և մի քանի այլ լրատվական կայքերի դեմ գործարար Խաչատուր Սուքիասյանի ներկայացրած դատական հայցի կապակցությամբ: ՏՎԽ-ն առաջարկել է նաև քննարկել այն և դրա վերաբերյալ ներկայացնել փորձագիտական կարծիք լրագրողական էթիկայի տեսանկյունից:

2. 2021թ. մարտի 25-ին Yerevan.today լրատվական կայքը հրապարակել է հետևյալ հոդվածը գործարար Խաչատուր Սուքիասյանի մասին.

> ***Զգուշացեք. Խաչատուր Սուքիասյանի բենզինը փչացնում է մեքենաները. Դեժավյու:***

Վերջերս հայտնի օլիգարխ Խաչատուր Սուքիասյանը (մականունը Գոզո), որը փաստացի հանդիսանում է Նիկոլ

Փաշինյանի ընտանիքի օլիգարխը, ձեռք է բերել «Ran Oil» ընկերությունը: Թվում էր, թե չմեծացող շուկայի պայմաններում, նա լուրջ մրցակցություն կստեղծի և դաշտում գործող այլ ընկերություններից հաճախորդներ կփախցնի, այդպիսով հարստացնելով իր և Փաշինյանի անկուշտ ընտանիքների ախորժակը: Սակայն, բենզինի և դիզվառելիքի շուկայում յուրահատուկ պարադոքսալ իրավիճակ է ստեղծվել: Իսկ իրականությունը և պարադոքսը կայանում է նրանում, որ այս ընթացքում, գրեթե բոլոր մրցակիցների մոտ, հաճախորդների աննախադեպ աճ է գրանցվել (Ֆլեշ, CPS, Max oil): Խնդիրը նրանում է, որ Սուքիասյան Գոգոն, ընկերությանը իր տիրապետության տակ առնելուց հետո, սկսել է ներկրել չափազանց ցածր գնով և անորակ վառելիք, ինչի հետևանքով հաճախորդների մեքենաների շարժիչները կարճ ժամանակ անց շարքից դուրս են գալիս: Այդ ինֆորմացիան արագ տարածվում է վարորդների շրջանում և նրանք համատարած հրաժարվում են սպասարկել «Ran Oil» բենզալցակայաններից: Սուքիասյանին և Փաշինյանին մեկ է, որ վարորդների մեքենաները շարքից դուրս են գալիս, իրենք իրենց եկամուտն են արագորեն հավաքում, որտեղից որքան կարող են, քանի Նիկոլը վարչապետ է:

Գործարարը համարել է, որ լրատվամիջոցի՝ հրապարակային ներկայացրած որոշ փաստացի տվյալներ զրպարտություն են, և դիմել է դատարան՝ պահանջելով լրատվամիջոցին պարտավորեցնել զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքել և վճարել փոխհատուցում:

3. Խաչատուր Սուքիասյանը ներկայացրել է նույնաբովանդակ հայցեր նաև News.am, Asekose.am, Armday.am, Yerkir.am, 168.am և Pastinfo.am լրատվամիջոցների դեմ:

4. ՏՎԽ-ն նախաձեռնել է քննարկել այս դատական գործընթացը:

5. Գործի դատական քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

6. Մինչ այդ ՏՎԽ-ն եզրակացրել է, որ լրատվամիջոցը նյութի բովանդակությունը չի ներկայացրել փաստերի ու տվյալների հիման վրա: Ընդ որում Խորհուրդը նկատել է, որ «հոդվածի հրապարակման պահին Խաչատուր Սուքիասյանը դեռ չէր ներկայացրել քաղաքական գործունեությամբ զբաղվելու հանրային հայտ, մինչդեռ ավելի ուշ նա ընտրվել է Ազգային ժողովի իշխող կուսակցության խմբակցության պատգամավոր, և նոր իրավիճակում դատավարությունները կարող են դիտարկվել այլ՝ իշխանության ներկայացուցչի կողմից լրատվամիջոցի նկատմամբ ճնշում գործադրելու համատեքստում»: ՏՎԽ-ն հորդորել է

գործարարին հետ վերցնել իր հայցերը և տեղեկատվական վեճերը լուծելու համար օգտվել արտադատական մեխանիզմներից:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների Էթիկական սկզբունքների կանոնագիր

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

1.1. Մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:

1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը:

1.3. Պատասխանատու մոտեցում ցուցաբերել սոցցանցային կամ նոր մեդիա հարթակների տեղեկությունները տարածելիս, անպայման նշել դրանց ստուգված, վստահելի կամ հետագա ստուգման ենթակա լինելը:

1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները:

2.2. Հնարավորինս խուսափել տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որևէ պարագայում չբացահայտել այն:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

6.2. Պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

քննարկելով

Yerevan.today լրատվական կայքի, ինչպես նաև News.am, Asekose.am, Armday.am, Yerkir.am, 168.am և Pastinfo.am լրատվամիջոցների դեմ գործարար Խաչատուր Սուքիասյանի ներկայացրած դատական հայցերի կապակցությամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի դիմումը և համապատասխան կարծիքը,

ընդունելով հանդերձ, որ

հրապարակումն անդրադառնում է հանրային կարևոր նշանակություն ունեցող հրատապ հիմնախնդրի,

ընդծելով, որ

նմանատիպ դեպքերում առավել կարևորվում է հրապարակման ժանրի և համապատասխան գործիքների ճիշտ ընտրությունը,

արձանագրում է.

1. լրատվամիջոցները «Դեժավյու» տելեգրամյան ալիքից արտատպված խնդրո առարկա հրապարակումը ժանրային առումով հստակ չեն դիրքավորել և որպես հավաստի տեղեկություններ են ներկայացրել խոսակցություններն ու բամբասանքները, առանց փաստերի, հղումների,

2. առկա է շփոթություն լուրի և մեկնաբանության միջև, քանի որ խմբագրությունները հրապարակման մեջ հստակորեն չեն տարանջատել դրանք,

3. այս կարգի տեղեկությունների հրապարակման պատշաճ ժանր կարող էր լինել հետաքննությունը, որտեղ կբերվեին տուժող վարորդների, համապատասխան փորձագետների, վարորդների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ների և վառելիքի

շուկայի վերահսկողության համար պատասխանատու պետական կառույցների ներկայացուցիչների տվյալներ և մեկնաբանություններ:

ԹԵՊԵՏ, համաձայն ԴՄ աշխատակարգի, փորձագիտական կարծիքի հրապարակումը լրատվամիջոցների, այդ թվում ինքնակարգավորման նախաձեռնության անդամների համար պարտադիր չէ, այնուամենայնիվ, ԶԼՄ-ների Դիտորդ մարմինը կոչ է անում հրապարակել սույն կարծիքը, ինչը կարող է նպաստել ներկայումս հաճախ հանդիպող համանման վեճերի կանխմանը:

ԱԺ պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին, միանալով ՏՎԽ կոչին հետ վերցնել հայցերը և տեղեկատվական վեճերը լուծելու համար օգտվել արտադատական մեխանիզմներից, ԴՄ-ն հորդորում է հետագայում ՝մինչև դատարան դիմելը հնարավորինս օգտվել հերքման և պատասխանի իրավունքից:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի

2021թ. հուլիսի 29-ի նիստում,

ԴՄ հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության

խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: